Դպրոցի պատին վերամշակված արվեստի որմնանկար

Դասապլան

Ներածություն

Այս դասապլանը կօգնի աշակերտներին տարբեր գործողությունների՝ մշակում, ստեղծագործ մտածողություն և խնդիրներ լուծելու կարողություններ իրականացնելու միջոցով ամրապնդել հիշողությունը և կենտրոնացնել ուշադրությունը։Երեխաների կողմից հավաքված տարբեր տեսակի թափոնները կարող են վերածվել ստեղծագործական պատկերների։ Այս առումով որմնանկարը լավ գաղափար կլինի, քանի որ այն կարող է գեղեցկացնել դպրոցի պատը։ Սա նաև շատ ստեղծագործ միջոց կլինի ցույց տալու, թե ինչպես կարելի է լավագույնս օգտագործել թափոնները։ Պլաստիկ շշերի խցանները լինում են տարբեր գույների և չափերի։ Այս խցանները կարող են ստեղծագործ տարբերակով օգտագործվել դպրոցում արվեստի և արհեստագործության մեջ։

Էկո-Դպրոցներ ծրագրի քայլերը. ուսումնական պլանների փոխկապակցում, իրազեկում և ներգրավում։
Ուսումնական պլանների փոխկապակցում. արվեստ և դիզայն, լեզու, բնապահպանություն։

Eco-Schools

6-8 Տարեկան

Նպատակներ

Աշակերտները կկարողանան.

- ոգեշնչել աշակերտներին ստեղծել արվեստի որևէ գործ վերամշակված թափոններից,
- ուսումնասիրել թափոնների վերաբերյալ իրենց ընկալումը,
- բացահայտել թափոնները վերօգտագործելու հետաքրքիր և զվարճալի եղանակներ։

Պահանջվող ժամանակ/ տևողություն

- **Դասարանային աշխատանք 1.** 20 րոպե գաղափարի մշակման համար և 30 րոպե գաղափարի իրականացման համար (սա կարող է բաշխվել ուսումնական տարվա ընթացքում)։
- **Դասարանային աշխատանք 2.** 30 րոպե գաղափարի իրականացման համար՝ օգտագործելով փաթեթավորման գնդիկավոր տոպրակ և ներկ։

4 QUALITY EDUCATION

11 SUSTAINABLE CITIES AND COMMUNITIES

Անհրաժեշտ ռեսուրսներ

- Տարբեր տեսակի թափոններ՝ շշերի կափարիչներ, սկավառակներ, պլաստիկ իրեր,
- փաթեթավորման գնդիկավոր տոպրակներ,
- դասասենյակի/ տարածքի/ միջանցքի դատարկ պատ,
- ներկ/ ջրաներկ,
- թուղթ,
- մկրատ,
- սպունգ։

Գործողություններ

Դասարանային աշխատանք 1

- Աշակերտների հետ միասին ընտրել արվեստի որևէ գործ, որը նրանք կցանկանային իրագործել,
- Ընտրել տարբեր տեսակի թափոններ, որոնք անհրաժեշտ են արվեստի գործի համար: Արվեստի գործի չափերը կարող են տարբեր լինել՝ կախված դպրոցում եղած թափոնների քանակից, տարածքի առկայությունից կամ աշակերտների թվից, տարիքից,
- Ավարտված որմնանկարն այնուհետև կարող է դառնալ դպրոցում մշտական ցուցանմուշ,
- Հղում 1-3 ռեսուրսներին:

Ընդլայնում և փոփոխություն

ԱՄՆ Նյու Ջերսի նահանգի Նյուարկ քաղաքի Սաութ Սթրիթի տարրական դպրոցի աշակերտները իրենց համայնքներից հավաքել էին ավելի քան 5000 շշի խցան, որից ստացել էին 243x365սմ մեծության էկոլոգիապես մաքուր խճանկար (ռեսուրս 2): Նախագիծը որոշ ժամանակ ցուցադրվել է Նյուարկի թանգարանում: Ծրագիրը աշակերտներին տվել է գործնական գիտելիք շրջակա միջավայրի պահպանության մասին և խրախուսել դառնալ պատասխանատու քաղաքացիներ:

Դասարանային աշխատանք 2

- Հանձնարարել աշակերտներին սպունգի միջոցով ներկել փաթեթավորման գնդիկավոր տոպրակի հստակ հատվածներ,
- Ներկելուց հետո շրջել փաթեթավորման գնդիկավոր տոպրակը թղթի վրա և սեղմել այն հետաքրքիր դիզայն ստանալու համար:

Գնահատում

Գնահատել աշակերտներին իրենց ստեղծագործական ունակությունների և թափոնների վերօգտագործման կարևորությունը հասկանալու համար:

Ռեսուրս

Ռեսուրս 1.

Վերամշակված որմնանկար պատի վրա

Ռեսուրս 2.

Նախագիծը կատարվել է Սաութ Սթրիթի տարրական դպրոցի կողմից

Ռեսուրս 3.

փաթեթավորման գնդիկավոր տոպրակներից պատրաստված ծովային կենդանիներ